

«Ներդաշնակ հասարակություն»
սոցիալական աշխատողների ասոցիացիա, ՀԿ
Գործունեության հաշվետվություն
2014-2015 թթ.

Խորհրդի նիստում ներկայացնելով 2014-2015թթ. -ին Ասոցիացիայի գործունեության հաշվետվությունը՝ Միրա Անտոնյանը նշեց, որ իրականացված աշխատանքները բխել են 2013թ.-ին Խորհրդի կողմից հաստատված Ռազմավարական ծրագրից: Միաժամանակ նա նաև նշեց, որ ծրագրի որոշ դրույթներ հնարավոր չի եղել լիարժեք իրականացնել՝ համապատասխան ֆինանսական միջոցների անբավարար լինելու պատճառով:

Ի լրումն ռազմավարությանը՝ 2014-2015 թթ. համար վարչության կողմից մշակվել է տարեկան գործունեության ծրագիր, և իրականացված աշխատանքները հիմնականում համապատասխանել են նախապես պլանավորված գործողություններին:

Ասոցիացիայի կողմից իրականացված գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում կարելի է տարանջատել երեք հիմնական ուղղությունների՝

- Ասոցիացիայի կայունացումը,
- Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներին աջակցելը,
- Համագործակցության ամրապնդումը:

Ասոցիացիայի կայունացումը.

Հաշվետու ժամանակահատվածում Ասոցիացիայի կողմից իրականացվել են երկու հիմնական ծրագրեր, մասնավորապես.

- Համայնքային սոցիալական աշխատողների կարողությունների զարգացում ծրագիրը, ֆինանսավորվող՝ Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ կազմակերպության կողմից, որի նպատակն էր համայնքային սոցիալական աշխատանքի դաշտի ուսումնասիրությունը և ըստ այդմ համապատասխան խորհրդատվության տրամադրումը համայնքային սոցիալական աշխատանքի իրականացման նախընտրելի ձևաչափի վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում մշակվել է նաև աջակցող Ձեռնարկ պրակտիկ գործունեություն իրականացնող սոցիալական աշխատողների համար:
- Սոցիալական աշխատանքի մասնագիտական չափորոշիչների մշակումը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ: Ծրագրի նպատակն էր

համախմբելով Ասոցիացիայի լոբբինգի և միասնական ձայնով հանդես գալու կարողությունները և հաշվի առնելով ներկա իրավական միջավայրը՝ մշակել սոցիալական աշխատողի գործունեությունը կարգավորող նվազագույն չափորոշիչներ, որոնք թույլ կտան պաշտպանել ինչպես սոցիալական աշխատանքի մասնագետին, այնպես էլ շահառուներին՝ ապահովելով մատուցվող ծառայությունների բարձր որակը:

Ի լրումն իրականացվող ծրագրերի, այս ժամանակահատվածում Ասոցիացիան նաև ներգրավված է եղել երկու գուգահեռ ծրագրերում, որոնց շրջանակներում քայլեր են ձեռնարկվել Ասոցիացիայի հատկապես ներքին կարողությունների զարգացման ուղղությամբ՝ ներքին ընթացակարգեր, կառուցվածքներ և այլն: Հետևելով ԱՄՆ ՄԶԳ կողմից ստացված խորհրդատվությունների վրա ԵՀՀ-ն իրականացրեց Ասոցիացիայի կարողությունների գնահատում՝ գնահատելու և վերանայելու Ասոցիացիայի կառուցվածքը, կանոնադրությունը, կառավարչական պատասխանատվության բաշխումը, որոշումների կայացման ընթացակարգերը, ռազմավարությունն ու գործողությունների պլանը: Այս գործընթացի նպատակը, որին ակտիվորեն մասնակցում էին Ասոցիացիայի վարության անդամները, Ասոցիացիայի՝ որպես ոլորտում դերակատարի դերի/կարևորության ամրապնդումն էր:

Ներքին կարողություններ

ԵՀՀ-ի աջակցությամբ Ասոցիացիան հիմնվելով ներքին կարողությունների գնահատման գործիքի վրա սկսեց մշակել նոր Ռազմավարություն և Գործողությունների պլան: Միևնույն ժամանակ, Ասոցիացիան նաև հնարավորություն ստացավ նույն ուղղությամբ աշխատել Ավստրիայից ժամանած փորձագետի հետ, ում կողմից ևս իրականացվեց Ասոցիացիայի կարողությունների գնահատում: Հիմնվելով երկու կազմակերպությունների կողմից իրականացված գնահատումների արդյունքների վրա, առանձնացվեցին Ասոցիացիայի 15 հիմնական նպատակները. սոցիալական աշխատանքի մասնագիտական չափորոշիչների բարելավում, սոցիալական աշխատողների շահերի պաշտպանության կարիքների ուսումնասիրում, Սոցիալական աշխատանքի մասին օրենքի նախագծի մշակում, սոցիալական աշխատողների և սոցիալական աշխատանքի մասնագետների կարողությունների շարունակական բարելավում, մասնագիտական հաղորդակցման և տեղեկատվության փոխանցման համակարգերի ձևավորում, սոցիալական աշխատողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների մշակում, Ասոցիացիայի հեղինակության ամրապնդում, ներքին փաստաթղթավորման և ֆինանսական պլանավորման մեխանիզմների սահմանում:

Աջակցություն սոցիալական բարեփոխումների իրականացմանը

Հաշվետու ժամանակահատվածում պետության կողմից իրականացվող հիմնական բարեփոխումները՝ համալիր սոցիալական ծառայությունների ներդրումը և երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների վերակազմակերպումն է:

Ասոցիացիան բարեփոխումների իրականացմանն աջակցել է մի քանի հիմնական ուղղություններով.

- Անմիջական աշխատանք ծառայություններ մատուցողների հետ՝ դեպք վարողներ, ԽՀՀ ներկայացուցիչներ և այլն, նրանց կարողությունները սուպերվիզիային, մենթորության կիրառման միջոցով զարգացնելու համար, այդ թվում շարունակական խորհրդատվության տրամադրման միջոցով,
- ՀԿ-պետություն համագործակցության խթանում, համագործակցային այցերի, համատեղ հանդիպումների կազմակերպման միջոցով, այդ թվում տարեկան գիտաժողովների ընթացքում սոցիալական ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերին մեկ հարկի տակ հավաքելու և ընդհանուր մտահոգության առարկա հանդիսացող խնդիրների քննարկման միջոցով:

Համագործակցության ամրապնդումը

Համագործակցություն ազգային մակարդակում. Այս ժամանակահատվածում Ասոցիացիան շարունակել է իր ներդրումն ունենալ, ինչպես երեխաների խնամքի հաստատությունների վերակազմակերպման, այնպես էլ շարունակել է համագործակցությունը Համաշխարհային բանկի հետ՝ համալիր սոցիալական ծառայությունների ներդրման բարեփոխումների ուղղությամբ: Ներկայումս, Ասոցիացիան ակտիվորեն համագործակցում է նախարարությունների, պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների մատուցող կառույցների, ինչպես նաև Ոստիկանության հետ:

Համագործակցություն միջազգային հարթակում. Ե.թ. սեպտեմբեր ամսին Ասոցիացիայի երկու ներկայացուցիչներ մասնակցել են Սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիայի Եվրոպական տարածաշրջանի Ներկայացուցիչների հանդիպմանը, որի շրջանակներում Ասոցիացիայի ներկայացուցիչները նաև ելույթներ են ունեցել ՀՀ սոցիալական ոլորտում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ: Հանդիպումը թույլ տվեց նաև զարգացնել փոխհարաբերությունները Եվրոպական տարածաշրջանի այլ երկրներ ներկայացնող ասոցիացիաների հետ՝ նախագծելով հետագա համագործակցության հեռանկարները:

Շնորհակալություն

«Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիա ՀԿ
նախագահ՝ Միրա Անտոնյան